




Պուրթորից համար
Տարեկան ֆոք 10
Վեցամսեայ 5
ԿԱՆԻԻԿ

20
ՍԱՆԴԻՍ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Արտասահման
Տարեկան ֆոք 12
Վեցամսեայ 6
ԿԱՆԻԻԿ

20
ՍԱՆԴԻՍ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հաքար օրերը: Մա-
նուցման տողը 10 Սանդիս: Երկու քիւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիս:
Զհրատարակուած գրութիւնը եւ յսրուիր:

Հասցե
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳ

ՀԱՅԵԼԻ անցեալ շաբթուան 55րդ
թիւը սպառած ըլլալով, չատերու կող-
մէ յայտնուած փափագին համեմատ,
պարտաւորեցանք նոյն թերթին մէջի
նոր Հաւատարմի վերնագրով յօդուածը
ներկայ թուոյս վերջին երեսին մէջ ալ
հրատարակել:

Նոյն 55րդ թիւէն մեզի վերադար-
ձնողին կը խոստանանք մէկին փոխա-
րէն երկու օրինակ «Հայեւի» տալ:

ԱԶԳԱՅԻՆ

Գործութեամբ կը ծանուցանենք թէ
Տիար Կ. Յովասափեան իր ծանօթ մար-
դասիրութեամբը որոշած է հարիւր չը-
քաւոր դաղթականաց ճամբու ծախսը
հոգալով, զանոնք զրկել ի Կ. Պոլիս:

Վեց եօթը ամիսներէ ի վեր Վառ-
նաի Ս. Սարգիս եկեղեցւոյն մէջ պաշ-
տոնավարող Հիւրմիւզեան Տ. Գէորգ քա-
հանան, անցեալ օր Թաղ. Խորհրդոյ
քարտուղարին երեսը ապտակելէ ետքը

աթուռ ալ կը վերցնէ անոր գլխուն ի-
ջեցնելու համար, որովհետեւ քարտու-
ղարը, ըստ իւր պարտականութեան,
Թաղ. Խորհուրդին իմացուցեր է եղեր
տէրտէրին վնասաբեր մէկ ընթացքը:

Թաղ. Խորհուրդը անմիջապէս քըն-
նութեան կը ձեռնարկէ և երկու կողմէ
ներկայացուած վկայներէն հաստատելով
որ յանցաւորը տէր Գէորգ քահանան է,
անոր ալ ևս նոյն եկեղեցւոյ մէջ պաշ-
տոնավարելէ դադարած ըլլալը կ'որոշէ:

Շումուրի Տ. Խորէն քահանայ Գիւ-
շիւքեան Կ. Պոլսոյ Կրօն. Ժողովին հար-
ցուցեր էր թէ, ապօրինի ամուսնացող-
ներուն արդեօք կարելի՞ է Հաղորդու-
թիւն տրուիլ: Կրօն. Ժողովը իր անց-
եալ չորեքշաբթի օրուան նիստին մէջ
որոշեր է պատասխանել որ, ապօրինի
ամուսնացեալք արդէն եկեղեցւոյ հետ
ունեցած յարաբերութիւններէն կըտ-
րուած ըլլալով, արժանի չեն Հաղոր-
դուելու, իսկ անոնք որ իրենց ապօրինի
ընթացքէն վերջնապէս կը հրաժարին
և զղջում կը յայտնեն, կրնան Հաղոր-
դուիլ:

Մշոյ Ս. Առաքելոց հնադարեան
Թարգմանչաց վանքին մէջ ալ Որբանոց
մը հաստատուեր է, որուն մատակարա-
րութեանը համար Պատրիարքարանի
կողմէ ամսական 15 օսմ. ոսկիի գումար
մը յատկացուեր է: Սոյն որբանոցին մէջ
կը գտնուին Սասունի, Մշոյ և զաշտի
գիւղերէն եկած որբեր:

Քղիցի հայերը աղերսագիր մը տա-
լով օսմ. կառավարութեան, խնդրեր են
որ արտօնութիւն տրուի իրենց Կ. Պոլիս
կամ այլուր երթալով աշխատելու. կա-
ռավարութիւնն ալ անոնց խնդրանքը
ընդունելու և էրզրումի միւթէսարըփու-
թեան միջոցաւ իմաց տուեր է որ այդ
մարդիկը ազատ են ըստ առաջնոյն ու-
ղած տեղերնին երթալ աշխատելու:

ՊՈՒՈՏԱԽՕՍ ՄԸ

Ամերիկայէ եկած Թղթակցութենէ մը
կը տեղեկանանք թէ, ներկայ պատերազմին
գացող զօրաց հետ՝ մինչև ցարդ ապրուստի
միջոց մը չի գտնող մէկ քանի հայեր ալ կը
գտնուին եղերամասնան 30 տոլար վարձքով:
Պոռոտախօս պարոն մը այդ մարդոց համար
կըսէ թէ, «ատոնք կերթան եղեր իրենց ջը-
ղուտ բազուկը մարզելու օտարին համար օ-
տարին դէմ, որպէս զի օր մ'ալ Հայաստա-
նի լիռներուն վրայ գոռացնեն այդ զէնքը»:

Նախ պէտք է գիտնայ այդ պարոնը թէ
մարզանքը խաղաղութեան տտեն կըլլայ. Բ.
պատերազմի տտեն զինուորութիւն լընել ու-
ղող անմարդ մարդիկ, որոնք կամաւոր կը
կոչուին, ըստ զինուորական օրինաց, կանո-
նաւոր բանակին խանգարում չի տալու հա-
մար զատ գունդեր կը կազմուին և միշտ ա-
ռաջ կը բշտին, որոնք ամենէն աւելի վը-
տանգի կ'ենթարկուին ու իրենցմէ 100ին 90ը
հոն կը ձգեն: Այս ճշմարտութեան անգի-
տակ ձեւանալով ելնել մեր խեղճ ու անփորձ

եղբայրներուն խրախոյս կարգալ որ երթան
օտարին համար հարիւրին իննսուն կեան-
քերնին վրայ տան, օգային դափնիներով ա-
նոնց աչքը ներկելով, շիեակը ամեն հայրե-
նասէրի գործ չէ:

«Ո՛վ մեծդ պոռոտախօսութիւն, Սպա-
նիան է քու հայրենիքդ» (Շարժում): Բո-
ժոժիկ — Ու մէկ մասնաճիւղդ ալ հոս Առա-
նաի մէջ:

Վերջին լուր

«Արմենիա» 66րդ թիւին մէջ Ամերի-
կայէ եկած Թղթակցութենէ մը կը տեղե-
կանանք թէ, «զինուոր եղած» 12 հայերէն
11ը դասալիք են եղեր:

Բոժոժիկ — Ըսպաննախնայ դափնինե՛ր
այդ «ԳԱՃալանջ» հայերուն:

ԲՈԺՈԺԻԿԻ ՄԵՂԱՅՆ

Երկու երեք օրէ ի վեր Բոժոժիկ չէր
երևար հրապարակին վրայ. հարցուցինք, բըն-
տընեցինք, ասդին անդին մարդ հանեցինք,
մունետիկներ կանչել տուինք, ու վերջապէս
իմացանք թէ՝ չարաճիճին հրեղէն սուրհան-
դակով մը դժոխք գացեր, և հետեւեալ ա-
լերսագիրը տուեր է սանդարամետին:

«Ո՛վ սանդարամետդ անդնդոց.

«Յայտնի է ձերուդ սաղայէլութեան
թէ սա յեղափոխական ասպարէզին մէջ ա-
ժեմը չաժեմը մէյմէկ պալթայի կոթ եղան,
ես նուաստս ինչո՞ւ համար չէքիճի մը կոթ
չըլլամ. շատերը մէյմէկ քիւլահ կանցունեն
կոր գլուխնին, ես ինչո՞ւ համար խալբալ մը
չանցունեմ. համբերն ու խուլերը սկսան ագ-
ռաւի պէս կրկուալ, ես որ ՚ի ծնէ սոխակի
մը պէս կը խօսիմ և մտիկ կըլլուիմ, ես որ
ամեն բան գիտեմ և ամեն դժուարին խըն-
դիրներու մէջէն ճակատաբաց դուրս կենեմ,
ինչո՞ւ այս մասին բանի մը օգտակար չըլլամ,
այնչա՛փ աւիւն ունիմ որ, արիւնս՝ սամափա-
րին մէջի ջուրէն 100 աստիճան աւելի բը-
բը բըբը. կ'եռայ իմ մէջս, այնչա՛փ զօ-
րաւոր կը զգամ ինքզինքս որ ոտքերս կը

դողան . . . կոշիկներու մէջ . ուստի կուգեմ փայլիլ սա խորհրդաւոր ասպարէզին մէջ . ու տակաւին չի մեռած , իմ ձեռքս իսկ երկար բարակ պատրաստած ինքնագովական կենսագրութիւնս կարգացնելով փառաւորուիլ ինծի համակիր . . . պարզամիտներէն :

Արդ , տէր իմ , երես անկեալ կաղաչեմ ու կը խնդրեմ որ արտօնէք զիս գէթ ժամանակի մը համար կարգաւոր ԸԼԼՈՒՐ . որպէս զի փորձութեանէն սկսեալ մինչեւ իջիմոնեանը . Նազարպէկեանէն սկսեալ մինչեւ Նազարնէֆէրեանը , ԱյԲ ԱյԲէն սկսեալ մինչեւ ԵՒ Օ Ֆէն , Պոպէն սկսեալ մինչեւ իւշ այագլը իսկէմրին , Մարտէն սկսեալ մինչեւ Օգոստոս 14ը , սանկ ամենը մեկանց խոստովանցեմ , անոնց ծովածաւալ մեղքերուն բաւութիւնը տամ , ու թէ որ քրէական յանցանք գործողներ գտնուին , օձիքնէն բռնելուս պէս հոս ձեր առջիւ բերեմ , որպէս զի դուք տնօրինէք անոնց արժանի պատիժը՝ ձերումդ Սադայէլական իշխանութեամբ ։

Սանդարամետը Բոժոժիկի այս խնդիրքը ամենողորմածաբար ՚ի նկատի կառնու եւ ժամանակաւ Բաթրիքիօսին մէկուն ըրածին պէս , ձեռքը անոր գլխուն վրայ դնելով , երեք անգամ «Սէնի փափազ էթիմ , փափազ ։ ըսելէն ետքը կը ճամբէ :

Պ . Բոժոժիկ ձեռք ձգած է յրէթի փրօնը վրան կառնէ , գլուխը գալըբազ մը կանցունէ և խել մը յեղափոխականները շուրջը հաւաքելով՝ կը սկսի հետեւեալ «հրաժարիմք ։

«Նախ քան զամենայն հրաժարիմք ի Հնչակէ և ամենայն Նազարբեկական մանօվրաներէ նորա , ի եալանճի տօլմասի յօդուածներէ նորա , ի խաբէութենէ նորա , ի դիւանագիտական խաղից նորա , ի ախրապետութենէ նորա , ի պրօպականտիսթից նորա , և ամենայն խղճովուական գործունէութենէ նորա հրաժարելով հրաժարիմք ։»

(Չայս երեք անգամ կրկնելէ ետքը երեսին ետին գռռնան : Պ . Բոժ . կը շարունակէ) .

Խոստովանիմք և հաւատամք ամենակատարեալ սրտիւ զչարքըս գործունէութիւնս յեղափոխականաց , ծնեալ Հնչակէ նախ քան զամենայն յեղափոխութիւնս , ոչ յետոյ և ոչ կրտսեր , ոչ վար ոչ վեր . այլ որքան մեծն մեծ ընդ նմին և պղտիկն պղտիկ : Հաւատամք զմինն մէկ քանի տեսակ յեղափոխութեանց զսօնթուրֆանտա դաշնակցութիւնս , որ առեալ յարենէ Հնչակի միաւորեցաւ ընդ պիւռօյս եւ եղեւ կատարեալ ապակեղրոնացում ալան քէնտինէ գործիչօք , ներկայացուցչօք և կօմիտէիւք իւրովք , որոց ոչ է սկիզբն և ոչ վախճան , (զի վարդօ և պատրիկօ) երէկ և այսօր նոյն և յաւիտեան) :

Հաւատամք թէ ոգին ազգակործանութեան եմուտ ի եաբմա յեղափոխականս , և էած ի հրապարակ զթէսթէներով մատնիչս , քիւմէներով դաւաճանըս եւ գունդագունդ առաւփախաւս . յորոց բազումք սատակեալք համբարձի եղեն , սակայն ի՛նչ ֆայտա , տէօքիւնթիւները քէօչէպուճախ տահա տեսնուելու վրայ են : Հաւատամք և ըզհատուցումն գործոց յեղափոխականաց բազմաց կեանք իմ աղնաւոր—աղայական իսկ խեղճ ժողովուրդին տանջանք յաւիտեական ։

Ապա Բոժոժիկ կերթայ անկիւն մը կը նստի եւ կը հրամայէ որ ներկայք ալ իր առջեւ ծունր իջնեն : Այս հրամանին ամենքն ալ կը հնազանդին , տէր Բոժոժիկի ձեռքը կը պագնեն և երկիւղածութեամբ ունկնդիր կըլլան հետեւեալ «Մեղայ ։»

(Շարունակելի)

ՁԵՌՆԱԳԻՐՆԵՐՈՒ ՔՕԼԷՔՍԻՕՆԻՆ

Հրատարակութեան շարունակութիւնը նիւթերու առատութեան պատճառով՝ առ այժմ ստիպուած ենք յետաձգել :

Բոժ . — Խանութիւն իւզը հատու :

ՄԱՂԱՂԿՈՒ ՍՆՏՈՒԿԸ

(Հար. և վերջ)

Գ.

Սնտուկին ճամբայ հանուելէն երկու օր ետքը, տիկին Մաղթուհի Ռուսճուքէն շոգեկառք կը նստէր Վառնաի ճամբով և. Պոլիս երթալու խոստմամբ, ուր երկու ամիս մայրիկին հիւր պիտի ըլլար եւ Յուլիսին վերադառնար 'ի Ռուսճուք:

Տիար Պետակարեան, որ առջի բերան դժկամակած էր տիկնոջ մեկնելու մասին հաւանութիւն տալու, վերջ 'ի վերջոյ հրամանը տուաւ, մտածելով որ ինքը երկու ամիսի չափ Պուլկարիոյ մէկ քանի քաղաքներուն մէջ բացուելիք տօնավաճառները երթալու համար բացակայ պիտի գտնուէր Ռուսճուքէն, ուստի տիկինն ալ այդ միջոցին կրնար 'ի Պոլիս մօրը այցելութիւն մը տալ:

Պարոն Ան, որ տիկնոջ ճամբորդութեանը ատեն Վառնաի մէջ կառքի եւ մակոյկի ծախքերը հոգալու համար օր մը առաջ ֆիլիպէէն իրեն ղրկուած 10 ֆրանքը գանձեր էր, առաւօտէն Վառնաի կայարանը կը սպասէր:

Իրիկուան ժամը 4ին շոգեկառքը եկաւ, տիկին Մաղթուհի Բ. կարգի վակոնէ մը դուրս ելնելով՝ դիմաւորեց պարոն Անը, որուն հետ կառք մը նստած՝ գնաց անոր բընակարանը:

Երկու օր ետքը տիկին Մաղթուհի՝ Վառնան մեկնող շոգենաւով. . . Պուլկաղ կ'ուղեւորեր, սնտուկը պարոն Անի բով ձգելով, մինչեւ ցնոր տնօրէնութիւն:

— Բայց ինչո՞ւ համար սնտուկը հետերնիդ չէք տանիր, հարցուցեր էր պարոն Ան:

Առ այս տիկինը պատասխանած էր.

— Կարելի է որ Պ. Նինի-մուլէն իմ ֆիլիպէ հասնելէս ետքը իր արհեստը փոխելու մասին նախապէս տուած խոստումը չի յարգէ եւ ես ստիպուիմ անկէ հեռանալ, ուստի տեղը չի կայ սնտուկն ալ բեռ ընեմ ու հետս պտտցունեմ. միայն կ'ապահովցու-

նեմ ձեզ թէ մէկ կամ երկու օրէն այդ սնտուկին գէպ ի ուր ղրկուելիքը պիտի իմացնենք: Մնաք բարով:

— Երթաք բարով:

...

Տիկնոջ մեկնելուն վրայ շաբաթ մը անցիր էր ու տակաւին լուր մը չի կար ֆիլիպէէն. պարոն Ան սկսած էր բարկանալ, որովհետեւ առեւտրական գործերու համար նոյն շաբաթուն Վառնան գէպ ի Հումնու եւ անկէց ալ ճումաաի տօնավաճառը երթալու մասին տուած որոշումը չէր կրնար գործադրել՝ ձեռքը մնացած այդ սնտուկին պատճառաւ: Նամակ մը յանձնեց ֆիլիպէի թղթատարին, յորում կը հարցնէր թէ ո՞ւր պէտք էր ղրկել սնտուկը, և. Պոլիս թէ ք. Պոլիս. Պուլկաղ թէ Ռուսճուք: Չորս օրէն քաղթ-բօսթ մը կը ստանար հետեւեալ բովանդակութեամբ.

«Նամակնիդ ստացանք, սնտուկի մասին մէկ երկու օր ալ համբերեցէք. ինչ ընելիքնիդ ընդ փոյթ պիտի իմացնենք ձեզի.»

Նինի-մուլէն.

Ասոր վրայ չորս հինգ օրեր ալ անցան, ձայն ձուռն չի գար. այն ատեն պարոն Ան հետեւեալ թրքաբարբառ նամակը ղրկեց.

Ազիզիմ Միւսիւ Նինի-մուլէն

«Գարտաշ, օնպէշ կիւն տիր պէքլէյօրում, բօսթախանէյէ կիտիպ կէլմէքտէն աշաղլարըմա սու էնտի. տահա պէքլէյիմ մի. վազըթ գալմատը, պէն ճումաա բանա երըընա կիտէճէիմ, պու սանտըգ էլիմի աւաղըմը պաղատը. ՄԱՂԱՂԿՈՒ պիր շէյօլտու. սէօյլէին, նէրէյէ կիտէճէք, Սթանպուլ մը, Պուլկաղա մը, եօգսա թէքըար Ռուսճուղա մը: Եկէր պու հաֆթա մէքթուպուսուն ճէվապընը ալմաշսամ, սանտըղը կէթիւրիւպ կէօմրիւկտէ արտիյէ անպալմա պրագաճաղըմ. սօնրա պագըն սիզէ գա-

չա՞ օթուրածագ մալի: Իշթէ պուգատար .
արթըդ պէնտէն կիւնահ չըգար:

Ան

Արդարեւ այս նամակը իր ազգեցութիւնը
նը ունեցաւ, Պարոն Նինի-մուլէն անմիջա-
պէս պատասխանեց այսպէս .

Պիրատերիմ՝ միւսիւ Ան.

«Օլմատը . պոչպողազը ընդ սայէսին-
տէ պու իշ Վառնատա բառօլա օլմուշ վէ
էօյլէ պիր Փամիլեա խալգընըն գուլազընա
վարմըջ քի՝ ալա իշիմիզէ կէլմէզ իտի . պու
սէպէպտէն ալթ իւսթ օլտուգ, սէվինճիմիզ
գարնըմըզտա գալտը . պինտէն ալէյհ, սան-
տըղը Սթանպօլ էմանէթճիսինէ թէսլիմ է-
տիպ, Պէյօղլունտա ք. Ս. Ալթը տէլինմիշեան
ատրէսինէ կէօնտէր:

Նինի-մուլէն

Վերջապէս Պ. Ան, Ապրիլ 19 կիրակի
օրը Վառնաէն Կ. Պոլիս մեկնելիք շոգենա-
ւուն էմանէթճիին կը յանձնէր ծանուցեալ
ՄԱՂԱՂԿՈՒ անուակը և երկայն շունչ մը առ-
նելով կըսէր. — Շիւքիւր, պէշտան գուր-
թուլտո՞ւգ:

ՀՆԱՐԱԳԷՏ ԱՐՔԱՅԱԶՈՒՆ ՄԸ

Անգլիական թերթերը պղտիկ սի-
քուն դէպք մը կը պատմեն, որուն դիւ-
ցազն է Աղեքսանդր իշխանը, Պէաթրիս
իշխանուհւոյն որդին և Վիքթորիա թա-
գուհւոյն թոռը, որ հազիւ տասը տա-
րեկան կայ:

Անցեալները մայրը, փայլուն նոր
ոսկի մը կուտայ աղուն, որ բնականա-
բար անմիջապէս կը վազէ այդ քսան
շիլիննոցը ծախսել մանր մունր բաներ
գնելով և երբ վերջի քեմին ալ կանհե-
տանայ, անամթաբար կերթայ մօրմէն
նորէն ոսկի մը ուզելու, բայց Պէաթրիս
իշխանուհին կը յանդիմանէ այդ պղտիկ

անառակը իր շուայլ բնաւորութեանը
համար և կը մերժէ մինչև իսկ բէնի մը
տալ:

Տղան տեսնելով որ մօրմէն խէր
չկայ, կ'որոշէ իր մեծ մօր գրել և իր
վիճակը հասկցնելով խնդրել որ վերջ մը
տայ իր այս տխուր կացութեան:

Թագուհին շատ փութկոտութիւն
չի ցուցներ իր թոռան փափագը լրա-
ցնելու — մոլութիւնը քաջալերելու չէ—
և նամա՞լով մը մեծ քանակութեամբ . . .
խրատներ ու յանդիմանութիւններ կը
զրկէ իրեն:

Երեք օր ետքը հետեւեալ պատաս-
խանը կը ստանար փոքրիկ կենցաղա-
սէրէն.

«Սիրելի մեծ մայր .

«Ստացայ Ձեր նամակը և հաւատա-
ցէք որ շատ մը յանդիմանութիւններ
ընդունած ըլլալու չեմ վշտացած. Ձեր
տուած բարի խորհուրդները շատ գոր-
ծիս եկան:

«Ձեր նամակը չորս ու կէս ոսկիի
ծախսեցի ձեռագիրներու սիրահարի մը»:

Հիանալի չէ՞ք գտներ դարավերջիկ
այս իշխանազունին գործնական հնարա-
մտութիւնը:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ԷՀԼԻ ԻՆՍԱՖ ՊԻՐ ՏԻԻՔԵԱՆՃԸ

Պուլկարիանըն պէօյիք պիր շէհերին-
տէ մալիֆաթու բաճըլըգլա մէշգուլ պուլու-
նան Հօմէն իսմինտէ պիր հայրն տիւքեանը-
նա կէչէնլէրտէ իւչ քէօյլիւկէր կիտէրլէր:

— Վագըթլար հայր օլտուն պա պէ-
զիրկեան .

— Ագըպէթին հայր օլտուն տոճա, կէ-
լին պագալըմ նէ՞ տլաճաանըզ . իսլահ ա-
մէլիգանլար . իսլահ պասալար, իսլահ հա-
սալար, իսլահ կիւճի իբլէյի, իսլահ անթէ-
րիլիք ալաճալարմըզ, հէմտէ իսլահ իբէքի

սարքաւորման վար, շամ իշի . հասրգը հա՛,
պագ իշթէ չիէք կիպի մալլար, հանկըսընը
կիւզիւնիւզէ քէսթիւրիւսէնի՛ք՝ հէմէնձէձիք շո-
ձուգ աշաա ֆըյտըրըվէրսին :

— Հէփիձի իսլահ պա, աժա սիրի
բարասըղ ա՛, պիրիձիի սէյր իտիվէրիլիմ տէ
հանկըսըն իշիմիզէ կէլիսէ ալը ալը վէրէլիմ,
օլմա՛ղ մը .

— Բէք իսլահ, հաչան պուրայա կէլ-
տինիզ, հիշիձիք բարա գազանմաճամրտա
պիլսէմ, կէնէ սիզին հաթըրընըզը բըրըվէրէ-
մէմ .

— Պա աժան, սիզին պու տիլինիզ վալ-
լահի առամը շաշըաբըրը վէրիյօր . նէ՞ տէսին
պա Հասան :

— Իւլէ պա, էմմէթէն առամ հարա-
ձաանը շաշըրըպ գօրպ կիպի գալըր :

— Թիի՛ հօլան, աժմատա բարինմիշ-
սինիզ . հա օնուն տիլի վասա՛ սիզին եօգմու
պա :

— Եաշա Մուսթաֆա ահա, եաշա պա,
քաֆան պիւիւք աժա՛ իշինտէտէ ագըլ հուլ-
եասը վար :

— Պա, պու պիզիմ քէօվիւն մըգտա-
րընա պա՛, ագըլը օլմասա քի՛մ օնա քէօ-
վիւ թէսլիմ էտէր .

— (Տիւքանձը՝ տէզկեսհտարա) քիշ
խօսելլէզ, գէշ մարդլարը խօսքա բընելլէմէ,
էօլէ տէյիլ մի եա Հասան ահա, հիշ օլմա-
սա պիր գահվէմիզի տէ իշմէմէլիմիսինիզ . հա-
տի զօ՛, իւշ գալէ սէօլէ, հէմ օրտա էյլէն-
մէ, կէս սահաթտան էկալա :

— Շէքէրլի մի օլտուն սատէ մի .

— Պիրի շէքէրլի իքսի սատէ .

— Հատէ չարուգ էկալամա . (չըրազ
կիտէր) հատի զօ՛, կէս խմէլլէնմիշ սաշաք
թիւթիւնիւ չըգարտա պիրէր լիւլէ տօլտուր-
սունլար :

— Հա պույուրուն տէ՛ .

— Թաղէ թիւթիւն եօգ մու .

— Շիմտի տօլտուրտում՝ աժա պիթտի .

— Եէթէ պու հօլան, գասապա ին-
սանլարը կիպի քիպար օլմաճաղա :

— Հասան պա՛, ինկէն նէ՞ իսթէտի,
հաթըրըլայապիլիյօրմուսուն . հա, պիր ին-
թարիլէք, պիր գաֆթանլըք պիր տէ շէմ-
պէր :

— Իւլէ եա՛ . հայտէ պա պէզիրկեան,
շու ալաճայը չըգարը վէր պագալըմ .

— Բէք իսլահ .

— Քա՛ջ փարա պունուն աաշընը :

— Պու մալ օլուր սէնին իշին 75 փա-
րայա .

— Նէ՞ . թիւ հօլան սէնտէ, անանըն
նիքեահընը իսթէտին հա՛ :

— Ինանըրմըսըն աժուճա, իշթէ պէն
պու մալտան էկէր 5 փարատան զիյատէ
գաղանըյօրսամ, իշթէ պու կէնձ եաշըմտա
Երուսաղէմէ կիտիպ իքի կէօլլէրիմ լոյս կէօր-
մէկէ գըսմէթ օլտուն :

— Հօլան պէզիրկեան, սէնտէ պու
կէնչլիկինտէ պէօլէ իքի կէօլիւնէ եէմին ի-
տէյօրսուն, պիզ եէմինսիզ տէ ինանըրըզ :

— Նէ՞ պագասսըն օնլարըն եէմինիւն
պա՛, օնլար կիւզ պոյաճըսը տըր :

— Պա՛գ, իշթէ կէլտէ եէմին էթմէ,
էկէր եալանսամ իշթէ պու սահաթ՝ շու
նէֆէս չըգարըզ կրթլարմտան աշալը աղուր
մաճուն կիթսին :

(Տէվսմի)

ՆՈՐ ԳԻԻՏ

ԷՏԵՍԵՆԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Ատրճանակ, վեցհարուածեան, հը-
րացան, հուր, սուր, կացին, սուխ, ծը-
խաւոր ու անծուխ վառօղ, ձայնաւոր և
բաղաձայն գնտակ, թնդանօթ, ռումբ,
պօմպ և այլ ամեն պատերազմական
գործիքներ, հրապարակին մնաք բարով
կըսեն կոր, որովհետեւ իրենց կը յաջոր-
դեն ահաւորն էտըսընի պատերազմա-
կան հետեւալ վերջին գիւտերը .

Թող մեծ հնարիչը ինքը խօսի .

«Հնարեցի պարաններ, որ կրնան
լարուիլ պաշարուած քաղաքի մը շուր-
ջը, և որ կը մեռցնեն ամեն անոնք՝ որ
փորձեն անոնց վրայէն անցնիլ : Ունիմ
նաե ելեքտրական շղթաներ՝ որոնք կըր-
նան նետուիլ քալելու վրայ եղող բանա-
կի մը վրայ : Այս շղթաները որ մէկ ծայ-
րով գործիքի մը կապուած են, միւս
ծայրով հաստատուած են թնդանօթին
մէջ դրուած ռումբի մը . երբ թնդա-
նօթները արձակուին, շղթաները օդին
մէջ կը տարածուին, որոնք խոչոր օ-
ձերու պէս մահ պիտի ախուեն թշնամի-

ին բանակին մէջ: Վերջապէս մեքենայ մը ունիմ, որ շատ հեռուները կրնայ նետել ելեքտրականութեամբ լեցուած ջուր հինգ հազար վոլթի համեմատութեամբ, որ յարգի շիւղի մը պէս բանակները կրնայ աւել տանիլ:

Սպանիացիք խելքերնին գլուխնին ժողովուրդ են, եթէ Էտրսքնի այս ջրհեղեղի մեքենան իրենց դէմ ելլէ կռիւին մէջ:

ՔԱՂՈՒԱԾԻ

ՏԵՂԱԿԱՆ ԼՐԱԳԻՐՆԵՐԷ

Իրաւունքէն,

Ահաբլի ամպրոպ մը երկրադողորդ շառաչիւնով պայթեցաւ մեր գլխին:

(Պո՛ւմպ . . .)

Տաւրոսէն,

Մեր վիճակը արդէն խոստովանած ենք և նորէն կրկնելու հարկ չենք տեսներ (Մենք ալ Աստուած թողութիւն չընորհեցէն ըսած ենք):

Հարժուակէն

Քաղաքական հորիզոնին վրայ հետաքրքրական երևոյթներ կան: Հին խաղը նորէն սկսած է. (Ո՞ր խաղը, ըսկամ պի՛ւ թէ քիթինէն):

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Փ. Պոլսէն

« Հայելի» ընթերցողաց քաջածանօթ աստանդաշրջիկ վարդապետը, որ առ այժմ հոս կը գտնուի, առաջին օրէն 'ի վեր կ'աշխատի Թիւրքի մէջ պաշտօնական գիրքով մը հաստատուիլ, մոռնալ ուղելով սակայն թէ երբ Վառնա գտնուած ատենը գրաւոր կերպով կեդր. վարչութեան գիմեց Պուլկարիոյ մէջ մնայուն պաշտօն մը առնելու, Կրօն ժողովը մինչև իսկ իր այն գրութիւնը նըկատողութեան չառնուորոչած էր: Վարդապետը պէտք է որ տեղացւոցս իր մասին ցոյց տուած գնահատելի հիւրասիր-

ութեան յարգը գիտնայ, գործիք չի դառնայ այս կամ այն կուսակցութեան, երես չի տայ պաշտօն մը ձեռք ձգելու համար եկեղեցիի պարտեզին մէջ հողմաբանող ու «Իրաւունք»ի 28 թիւին մէջ ինքզինքը յառաջդիմութեան ջերմ ծարաւի ցոյց տուող յողուածագիր պարոնի մը, որ կուսակցութեան մը ձեռքը կոյր գործիք ըլլալով՝ անոնց գրածը միայն գիտէ կարդալ ու ստորագրել:

Խաղաղութեան պաշտօնէի մը չի վայլեր սերտ մտերմութիւն հաստատել այնպիսի անձնաւորութեանց հետ, որոնց արարքը ժողովուրդեան խոհական մասին դժգոհութիւն կը պատճառեն:

ԴԻՏՈՂ

Յ. Գ. Ըսողներ կան թէ՛ հայր սուրբը՝ եպիսկոպոսանալու համար պէտք եղած ժողովրդական հանրագրութիւն մը ձեռք բերելու տենջանքէն կուզէ եղբոր Պուլկարիոյ մէջ մնայուն առաջնորդ ընտրուելու:

ՆՈՅՆ

Հայելի. — Տէրը յաջողէ:

Բոժոժիկ. — Էօթէրսէ՛ էյի տիւտիւկ:

ՃԱՇՆԱՐԱՆ ԵՒ ԶԲՈՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻԻՖԷՆԿՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Հաճի Բանաբօին ճիշդ դէմը

Արհեստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովասուն, մաքուր ու գեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը կը բերէ հայ ճաշակին, այլ ևս մեծ խթան մը կը ըլլայ որ հայ ու օտար փափկակերներ իրենց դարնանային ու ամառնային ժամագրավայր մը ընեն զայն զբօսնելու ու ճաշելու, Պոնտոսեան ախորժաբեր հովերուն ու Սև ծովի կապոյտ տարածութեան առջև:

Հակառակ այս հրապուրիչ առաւելութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ գիւրամատչելի գիներ թէ ըմպելիքի և թէ կերակուրներու մասին:

5

ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՔ

Հաւատքով ի՞նչ ես .

— Յեղափոխական եմ . . . իմ հաւ-
նած կերպովս :

— Յեղափոխական բառը ի՞նչ կը նը-
շանակէ .

— Ինծի համար կը նշանակէ հրապա-
րակը տակնուվրայ ընել ու անկիւն մը բա-
շտելով նստիլ :

— Այդ տեսակ յեղափոխութիւնը ի՞նչ
պէս պաշտել պէտք է .

— Փորսկշտացուցած ատենը սիրուհիս
պէս, իսկ անկուտի ձգած ատենը . . . զոն-
բանչիս պէս :

— Այդ յեղափոխութեան հաւատա-
լիքները ո՞ր պրուածքին մէջ կը գտնուին հա-
մառօտիլ .

— Հանգանակին մէջ .

— Հանգանակը ո՞վ բերաւ մէյտան .

— Պրօպականտիստները .

— Որն է այդ հանգանակը .

— Հաւատամքն է .

— Գոց գիտե՞ս ,

— Գիտեմ : Հաւատամք ի մի չարքըն
յեղափոխութիւն , հայր ամեն երկպառակու-
թեանց . արգելիչն վաճառականութեան եւ
առևտուրի , արարիչն Պատրիարքարանի , Պա-
պը ալիի եւ Պանքայի ցոյցից , ստեղծիչն Հա-
յաստանի եւ Պոլսոյ կոտորածից , երևելի եւ
աներևոյթ առաւփախաւութեանց եւ Հաստա-
կութեանց :

Հաւատամք եւ ի մի տէր Նազարէկ ,
որով ամենայն ինչ ապստամբութիւն եղև ՚ի
Սասուն , ՚ի Զէյթուն , ՚ի Ախարիա , ՚ի Տրա-
պիզոն , ՚ի Թոքատ , Յէնկիւրիւ եւ ի Բիւզան-
դիոն , երևելիք եւ աներևոյթ կոտորածօք : Որ
յաղագս մեր հայկեան եւ վասն մերոյ հա-
րենիքի փրկութեան իջեալ ՚ի Ռուսիայից , մար-
մնացաւ , մարգացաւ , գաղափարացաւ եւ հա-
րստացաւ կատարելապէս . որով էառ զմար-
մին , զհոգի եւ զհանձարս եւ զամենայն զոր
ինչ է ի խաղաղոյս , զիզել զոսկին եւ փառա-
ւորիլ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք : Խօսեալ
քարոզեալ , կախարդեալ , խաբեալ զմիամի-
տըս եւ զագէտս , յերորդ աւուր արշտոյսին

առեալ զմատամն իւր փախեալ ՚ի Լոնտոն եւ
նստաւ ընդ աջմէ Թայմզ գետոյն :

Գալոց է նովին մարմնովն եւ փառօր
յեղափոխութեան , թուել զսթէռլինս եւ
զլիրայս , պէնդանիս եւ զմեռեալս որոյ տի-
րապետութեանն ոչ գոյ վախճան :

Հաւատամք եւ ՚ի պաշը գրչը պէլլիսիզ
պիւռօյականսն , յանեղն եւ ՚ի կատարեալն ,
որ խօսեցաւ ՚ի թուրքիկ թերթս եւ կոնա-
կի վրայ բաց լրագիրս , որ էջն ՚ի Ժողովուր-
դըս , քարոզեաց զպօմպայս եւ բնակեցաւ . . .
՚ի լօդանթայս եւ ՚ի պիրախանայս : Հաւա-
տամք եւ ՚ի միմիայն ընդհանրական եւ ժո-
ղովրդական շուարումն : Հաւատամք ՚ի մի
փորթուգալեան . մի Արիիարեան . մի Չա-
րաղեան , մի Չաքրեան , մի Եռագլուխ տառ-
պէլլիսիզեան , մի Մարտ , մի Նոր կեանք , մի
Տաւրոս , մի Փարոս , մի Իրաւունք , մի Հա-
յելի , մի Շարժում , մի Գաղաթում , մի Ար-
մէնիա եւ մի լԱռմէնի , մի Հնչակ եւ մի
Դրօշակ , որոց վասն մաղթենք ՚ի գրաստու-
թիւն , ՚ի լրջութիւն եւ ՚ի գիտակցութիւն
ըրածից եւ թողածից , ՚ի յարութիւն մեռե-
լոց , ՚ի դատաստանն տիպլօմաթիայից , տը-
քայութիւնն անթութեանն մեռնելու վրայ ե-
ղող ճշմարիտ հերոսից եւ ՚ի կեանս երեւա-
կայեալս :

Իսկ որք ասենն էր երբեմն յորժամ ոչ
էր հնչակութիւն կամ էր երբեմն յորժամ ոչ
էր դաշնակցութիւնն , կամ թէ յօշէից եղն ,
կամ յայլմէ աղգէ , զայնպիսիան նզովեն
պատառարոյժք եւ պնակալեզք յեղափոխու-
թեան :

Բոժոժիկ . — Իսկ մեք փառաւորեցուք
որ յառաջ քան զյաւիտեանս երկիրպագանե-
լով միմիայն փառքի եւ դրամի , այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԻՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք :

Отговоренъ-редакторъ: Н. Драгулов

Печатница "Взаимность" — Варна.